ՈՒՍՅԱՐՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

ՊԱՏԱՆԻ ՀԵԾԵԼԱԳՈՐԾԵՐ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЯЗЫКОЗНАНИЯ
Академии Наук
СССР

ԵՐԵՎԱՆ-ՊԵՏՀՐԱՏ ՑԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ —1934

Ca 34-И 720
891.995
Ч-33

ՈՒՏՅԱԲՐԻՆԱ ՎԱՐՈՍՅԱՆ

ՊԱՏԱՆԻ ՀԵԾԵԼԱՁՈՐԱՅԻՆՆԵՐ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ
ՑԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1934

n 9 AUG 2013

13129

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

56221-66

Отв. ред Г. А. Потенц Тех. ред. О. Тер-Давыдов

Сдан набор 5/II-1934 г.
Издан. 93/3670
Статформат А6 105x148
Уполкрайлит № Б—236

Подписано в печ. 31/III 1934 г.
Об'ем 1 1/8 печ. листа.
Заказ 780
Тираж 1000 экз.

Типография им. „Стачки 1902 года" АЧПТ в г. Ростове на Дону

2011-07

I.

Մարտական ժողով

Կյանքն եր յեռում ակրմբում,
Յերգ ու խինդ եր ժրաջան։
Մեծ ժողով եր կրակոտ,
Դրված խնդիր մարտական։

Բաղբաժնի պետը հուզված,
Խոսում եր վեհ ու խրոխտ—
— Դուք Լենինյան ժիր սիրունդ
Առվակի պես կարկաչոտ.

Գիտեք, այսոր ձեզանից
Պահանջվում է լուրջ խնդիր,
Պետք է մեկնեք հսկելու
Կոլխոզային դաշտերին։

Բերքը պետք է պահպանեք
Ձեր աչքերի լույսի պես.
Չէ՞ վոր այսոր մեր առաջ,
Դրված է լուրջ մի խնդիր։

Արդեն հաղթել, կանգնել ենք
Ունեվոր կյանքի ճամբին.
Վոր մենք քայլենք այդ ուղին,
Պիզակ անցնենք դեպ առաջ։

Զվախենանք թշնամուց,
Լինենք տոկուն, աննահանջ։
Դրա համար մեզ պետք է
Ջերմ ու ազնիվ աշխատանք։

Վոր կուռ թափով ստեղծենք
Բայշեվիկյան կոլխոզներ,
Կոլխոզնիկները ունեվոր—
Անդաստակարգ ծաղկուն կյանք։

Իսկ թշնամին այսոր նենգ,
Մեր կուռ թափից բարձրացող,
Միշտ թափում է ճիգ ու ջանք,
Վոր խորտակի կյանքն աճող։

Դրա համար դուք դաշտում,
Պետք է լինեք ժիր, զգաստ,
Վոր հաղթությամբ միասին
Բերքն հավաքենք անվնաս։

Կոլխոզնիկին թեվ-թիկունք,
Արթուն հսկեք դուք դաշտին,

Քաղաքացին պետը հուզված
Խոսում էր վեհ ու խրոխտ։

Չխնայեք թշնամուն,
Յեթե փորձի մոտենալ
Կոլխոզական հասկերին։

Պատրաստ կլինենք, ընկերներ,
Քաջ մանակից այս մարտին,
Չեք նահանջի դերքերից,
Յերբ գրոհի թշնամին։

— Միշտ պատրաստ ենք,
Միշտ պատրաստ —
Հնչեց Ներանց
Զայնը զիլ։
Կելնենք խիզախ
Պայքարի,
Բայլշեվիկյան
Դաշտերը,
Կպահպանենք
Կուռ բազկով,
Կամքով հաստատ՝
Անվախ, ժիր...

Սալյութ տվին միասին,
Յերդվեցին միաձայն—
Վոր միշտ պատրաստ կատարեն
Խնդիրները ժարնական։

II.

Հերոսների յերդը

Վանիկն առույգ պիոներ,
Վանիկն առողջ պատանի.
Վանիկը գիտե պայքարել,
Վանիկը քաջ է, պիտանի...

Առավոտ վաղ վեր կացավ
Կապեց փողկապը վզին.
Թմբուկն առավ դուրս թռավ,
Լիք պայուսակն աջ ուսին։

Մին եվ ահա չորս կողմից
Ալ փողկապներ թռվռուն,—
Զարահճի յերգ ու խաղ—
Կարծես բացվեց վառ գարուն։

Հանկարծ շեփորը հնչեց զիլ.
Թմբուկն ուժգին վորոտաց.
— Շարքի պատրաստ ընկերներ —
Կոլվարի ձայնը թնդաց։

— Քայլո՜վ մա՛րշ...
Շարքերն առաջ շարժվեցին։

Բոլորն ուրախ ժպտերես,
Իսկույն շարքեր կազմեցին։

— Զգաստ...
— աջ դարձ...
— քայլո՜վ մարշ...
Շարքերն առաջ շարժվեցին։

Բազավարը ժիր, տոկուն,
Շողշողուն «Կիմ»ը կրծքին,
Առաջնորդում եր վստահ,
Վոգեվորում ջերմագին։

— Անդրիկ, դե՛, դի՛լ շեփորիր,
Թող դաշտերը մեր թնդան։
Թմբկահար, ուժգին խփիր,
Թող կյանքն այնտեղ ժիր խնդա։

Տրա-տա-տա-տա...
Տրա-տա-տա...

Ի՜նչ ուրա՛խ է կյանքը մեր —
Կոլխոզական դաշտերին
Մեր ուժն ենք տանում նվեր։

Տրա-տա-տա տա,
Տրա-տա-տա։

Ի՜նչ ուրախ է կյանքը մեր —
Մեր պատանի շարքերի
Թափն ենք բերում ձեզ նվեր։

Յերգով, խնդով գալարուն,
Բայլում եյին դեռ յերկար —
Կրծքերի տակ տենդագին,
Աշխատանքի վեհ խինդ կար։

Կոլխոզնիկներն ուրախ
Բոլորեցին խարուշկին։

III.

Ջերմագին ընդունելություն

Տոթ էր։ Կեսոր արեվոտ։
Հնձում էին յեռանդով —
Մի կողմ հնձիչ մեքենան,
Իսկ մյուսը՝ դերանդով։

Բաղուկներդ լարեք ջան,
Արամ, Արամ կանգ մի առ.
Ցոլակ, դեռ քշիր սայլը.
Վարդան, շտապ խուրձը տար։

— Տղերք, հանդիսատ մի վարկյան
Դիմավորենք շարքերին։
Վ.ադո, Վ.ադո, մի նայիր
Փոքրիկ ժիր պիոներին։ —

— Ձախ, աջ, ձախ —
Տրա-տա-տա,
— Ձախ, աջ, ձախ...

Տրա-տա-տա-տա,
Տրա-տա-տա։

Կոլխոզնիկները սիրով
Դիմավորեցին յերթին,
Ուռաներով, յերգերով
Վ.ողջույն տվին ջերմագին։

Պիոներներ ժրաջան
Դաշտում վրան խփեցին,
Արևն արդեն մայր մտավ,
Յերբ ճաշի հավաքվեցին։

Հետո խարույկ վառեցին,
Վ.ադոն տուշի նվագեց —
Հովաս բիձան լիաթոք,
Քաղցր ձայնով յերգ ասաց։

Կոլխոզնիկներն ուրախ
Բոլորեցին խարույկին.
Ուրախ շրջպար բռնեցին,
Մեջ տեղ քաշին Վ.անիկին։

Հետո զրույց արեցին
Բաղավարը խոսեց ժիր.
— Գիտեք, այսոր թշնամին
Քչփչում է մեր մասին,

Վոր մենք ի՞նչ ենք, թիզուկես,
Պարապ, անբան հացակեր։
Զուր են ուղարկել այստեղ,
Ավելորդ մի «ծանր» բեռ։

Բայց մենք գործով ցույց կտանք,
Վոր տոկուն ենք, աներեր,
Լավ գործունյա, գիտակից,
Յերկրին պաշտպան հերոսներ։

Յերբ զրույցը վերջացավ—
Կիման կարդաց պատմություն,
Իսկ բժիշկը կոլխոզի,
Կարդաց փոքրիկ զեկուցում։



Հիմա արդի կենտրոնում
Յեկե՛ք, հաստ ձողեր տնկենք։

IV.

Ուրախ առավոտ

Առավոտ վաղ շեփորը
Զարթեցրեց ամենքին,
Նրանք տեղից վեր թռան
Դեպի գետը վազեցին։

Մարմինները շփեցին
Սառը ջրով, լվացին.
Ապա մարզանք—վարժություն,
Հետո վազքով յետ դարձան։

Նախաճաշի հենց խսկույն,
Հավաքվեցին ծառի տակ,
Էլի սեղանի չորս կողմը
Բոլորեցին համարձակ։

Նախաճաշը վերջացավ,
Իսկույն շարքեր կազմեցին,
Բաժանվեցին խմբերի,
Հսկիչ պոստեր ընտրեցին։

56221-66

Իսկ ընդհանուր հսկիչը
Մեր Վանիկն եր կրակոտ,—
Աշխատանքում խիստ ճարպիկ,
Պարտաճանաչ, պահանջկոտ։

Վանիկը հսկիչներին
Իր մոտ կանչեց ժողովի—
Բացատրեց մեծի պես՝
Թե ով ինչ պետք է անի։

— Ամեն մեկդ մի ծայրում
Ուշադիր ու պահապան—
Պոստում զգաստ և արթուն,
Վոչ մի շարժում, վոչ մի ձայն։

Ցեթե վորևէ ծայրում
Հանկարծ վտանգ պատահի
Ցերեք անգամ սուլիչով,
Տվեք զիլ ազդանշան։

Մի այլայլվեք, ժիր յեղեք,
Զգաստ յեղեք ու արթուն—
Ով վոր մի քայլ հեռանա,
Հարցը կդնենք վաշտում։

Հիմա արտի կենտրոնում
Ցեկեք, հատ ձողեր տնկենք։

ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академия Наук
Հայ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-ում ՀՍՍՌ

Վրան ծածկենք թփերով,
Բարձր վիշկա պատրաստենք։

Վոր վիշկայից հեշտ լինի
Տեսնել հեռու ամեն ինչ —
Թե վոր պոստն է ուշադիր
Պարտաճանաչ, լավ հսկիչ։

Թռչկոտելով, յերգելով
Զողեր, թփեր բերեցին,
Յեվ մի ժամվա ընթացքում
Վիշկան բարձր տնկեցին։

Ուրախ, գվարթ ցրվեցին
Ամեն մեկը իր պոստին.
Յերեկոյան հավաքվում
Զեկուցում եյին հսկիչին։

Վանիկն ամեն նորություն
Շուտ հայտնում եր քաղաքաժնին,
Ստանում եր ցուցմունքներ
Ուղղություն տալիս գործին։

V.

Արթուն հսկիչներ

Որը դեռ չեր լուսացել
Դաշտերում կար ցող ու շաղ.—
Վանիկն յելավ վիշկային,
Հեռադիտակը վզից կախ։

Ուղղեց, դրեց աչքերին,
Դիտեց հեռուն լայնարձակ.—
Ահա հեռվում մի սև բիծ
Կամաց մոտավ դեզի տակ։

Միշտ շարժվում է, կանգ առնում,
Մարդու ստվեր վոնց լինի.
Միշտ ցցվում է, կռանում,
Ինչպես գազան մի վայրի։

Վանիկն իսկույն վիշկայից
Մոբղայով տվեց նշան.
Պոստերից շտապ հասան,
Շրջապատեցին նրան։

— Ի՞նչ ես անում դու այստեղ,
Ի՞նչ թաղցրիր դեզի տակ.
Մի ձևանա դու անմեղ,—
Ասաց Վանիկը հատատ։

— Յե՛ս... յես վոչի՛նչ...
Յես միամիտ...
Ի՞նչ եք ուզում, ի՛նչ—
Թողեք ինձ, չե՛ վոր
Արտը ձերը չե։

— Ի՞նչպես մերը չե —
Շատապ ցո՛ւյց տուր,
Չե՛ս լսում դու.
Կոլխոզական դաշտերը,
Հիմա մեզ ե
Պատկանում։

— Տղե՛րք, այստեղ,
Դեզի տա՛կ...
Յեվ հաղիվ—հաղ
Մի մեծ պարկ,
Դուրս քաշեցին
Լեփ—լեցուն։

Հանկարծ դեզի հետևից
Դուրս ցատկեցին յերկսով—

Վանիկն յելավ վիճկային...
Դիտեց հեռուն լայնարձակ։

Մեկը կոլխոզնիկ Սողոն,
Մյուսն էլ մենատնտես,
Կուլակաթաթ Վաղոն։

— Ի՞նչ եք ուզում դրանից
Հարձակվեցին յերկուսով,
Պարկը տվեք թող անցնի
Դա խեղճ կին է, շուտ, այն կողմ։

Դուք եյիք պակաս, թիղու կես,
Մարդ են դառել պահ, մտիկ,
Ի՞նչ եք թափվել մեղվի պես,
Շուտ բաց թողեք, մի վիճեք։

— Ապա դուք էլ սրա հետ
Շտապ անցեք դեպ առաջ,
Հետո այնտեղ կխոսենք,—
Դիմեց Վանիկը նրանց։

— Զեռքդ, ձեռքդ քեզ քաշի,
Արյունաշաղաղ կանեմ.
Այ, տեսնում ես բռունցքս,
Տեղնուտեղը կսպանեմ։

Չեմ վախենում բռունցքից —
Լավ, հերիք է սպառնաք։

Յեվ հազիվ-հազ
Մի մեծ պարկ
Դուրս քաշեցին
Լեփ-լեցուն։

Միենույն է, քաղաքաժնից
Չէք ազատվի, հասկացաք։

— Սուս ասում եմ, այ տղա,
Մի հատառիր, մի կանչի...
Հանկարծ ուժեղ բռունցքը
Իջավ Վանիկի մեջքին։

Ուժեղ ցավից նա ցնցվեց,
Բայց չթափեց կաթ արցունք.
Համառ մարտի բռնվեց
Ընահանջեց թշնամուց։

Լուր հասցրին գյուղխորհուրդ,
Իսկույն հասան ոգնություն.
Բանտարկեցին գողերին,
Գործը տվին դատարան։

■

VI.

Կոլխոզական դաշտերում

Ձմեռ, դաշտերում համերգ է,
Աշխատանքի լեռ ու ձոր,
Հասկահավաք ամենուր,
Առատ բերքի մեծ դեզեր։

Ձեռքերով ժիր մանկական
Հավաքում են միառամի,
Պայքարում են ժրաջան,
Վոր հասկն իզուր չկորչի։

— Հավաքեցի հազար հասկ.
— Իսկ յես հազարն ավելի։
Տեսեք, տեսեք հասկերն
Ինչ առուց են, լի ու լի...

Հաղթանակից ոգևորված,
Պիոներները կոլխոզին
Հանձնին քսան փութ ընտիր
Վոսկու պես դեղին ցորեն։

Սոցմրցում էին հաստատել
Յուրաքանչյուրն իրար հետ,
Դեռ ժամկետը չհասած,
Պայմանագիրը լիովին
Կատարում էին կետ առ կետ։

Բաղբաժնի պետը ուրախ
Դիտում, հրճվում էր սիրով.—
Բազուկները մանկական
Շարժվում էին յեռանդով։

— Յերեվում է շատ է շոգ,—
Դիմեց պետը Վանիկին,—
Վոչինչ, ընկեր Լիպարիտ,
Զենք վախենում մենք շոգից։

Տեսեք վոնց ենք սեվացել
Ոգտվելով արեվից.
Մեր դաշտերի զեփյուռից
Առողջացել, գերացնել։

Զրուցում էին, աշխատում
Բրքիչներով մանկական.
Խուրձեր դիզում կողք-կողքի
Բազուկներով ժրաջան։

Կալսիչներն էին դղրդում
Հասկեր կալսում վոսկեգույն,

Հատիկներից բյուրավոր
Դեղին շեղջեր բարձրանում։

Հովաս բիձան մեջքը կոր
Աշխատում եր ժրաջան.
Վորակի տեսուչ եր հմուտ,
Սերմ եր ջոկում հերթական։

Նա բոլորին ուղեցույց,
Նա բոլորին մրցակից—
Բաղբաժնի ջերմ ոգնական՝
Հարվածային լավ գործիչ։

■

VII.

Հանցագործը պատժված

Կոլխոզի ցրիչն յեկավ
Հասա կապոցը թեվի տակ,
Բերեց հեռագիր, թերթեր,
Յեվ հանձնեց մի փակ նամակ։

Բաղրաժնի պետն իսկույն
Փակ նամակը վերցրեց,
Հայացքը հառեց կնիքին՝
Զգուշ ծրարը բացեց։

Նա լուռ կարդաց մի վարկյան.
Հայացքն հառեց չորս բոլոր,
Ուրախ գոչեց բարձրաձայն.

— Ուշադրություն, ընկերներ,
Ասա լսեք մի վարկյան,
Հայտնելու եմ ուրախ լուր,
Մի վորոշում մարտական։

Արդեն դատել են նրանց —
Նենգ գողերին մեր դաշտի.
Չեն խնայել վոչ մեկին,
Յենթարկել են խիստ պատժի։

Նենգ թշնամուն տոն տվող
Մեր Սողոն է հարբեցող.
Յերեսից ջերմ բարեկամ,
Իսկ տակից չար կամեցող։

— Ո՞վ, Սողո՞ն է...
— Մեր Սողո՞ն...
Մի քանիսը զարմացան. —
— Մի՞թե... մի՞թե,

— Մեր Սողո՞ն...
Մրմնջացին կիսաձայն.
— Ախր կոլխոզի անդամ,
Բա եղպես էլ զարմանք բա՞ն...

— Այո, Սողոն, ընկերներ,
Պետք չէ զարմանալ այդքան.
Թշնամին այսոր փոխել է
Պայքարի ձևը հարձակման։

Նա յերեսից գործունյա
Միամիտ է ձևանում,

Այնտեղ ինչին «կողմնակից»,
Վոչնչի դեմ չի գնում։

Իսկ տակից քանդում է նա
Աշխատում է նենգաբար,
Վոր ճեղքվածքներ բաց անի
Մեր կոլխոզում մարտական։

Կանգ չենք առի այս մարտում, —
Գոչեց նա վճռողական,—
Մենք թշնամուն չենք զիջի,
Չենք տա դիրքերը նրան։

Ունեվոր կյանք կառուցել
Հեշտ չէ այնպես, անվտանգ։
Պետք է, պետք է ընկերներ
Համառ պայքար, աշխատանք։

Իսկ քաղաքժիննն այսոր
Մեր Վանիկին ժրաջան,
Նվիրում է է մի կոստյում.
Իսկ վողջ վաշտին՝ ալ դրոշ—
Հերոսական վեհ նշան։

Ուռաներով լիաթոք
Վանիկին մեջ տեղ բերեցին,

Բարձրացրին ձեռքերին
Այդ անձնվեր հերոսին։
Աշխատանքը թափ առավ
Ու շտապց մեքենան —
Բազուկներով ժրաջան,
Գործի անցան մարտական։

VIII.

Կայտառ ուսումնականներ

Ներանք առուլդ ու կայտառ
Դաշտից դարձան դեպ ուսում—
Նորից խնդիր մարտական,
Նորից յեռանդն է խոսում։

Հավաքվել են ժողովի
Կարմիր անկյուն լենինյան—
Վանիկը պետք է զեկուցե
Պիոներական հավաքից։

— Դե սկսիր շուտ պատմել,
Ի՞նչ նորություն դու տեսար,—
Յեվ բոլորը անհանբեր
Վանիկին եյին քաշքշում։

— Հիմա, հիմա, շունչ քաշեմ,—
Հազաց, կոկորդը մաքրեց,
Ու հավաքում լսածը
Ընկերներին հաղորդեց։

Հավաքվել եյին դաշտերից
Կոլխոզական հեռու, մոտ,
Բերքի պաշտպան հերոսներ
Խիզախ, տոկուն, կրակոտ։

Յեկել եր մի պիոներ
Տասնյերկու տարեկան,—
Միտյա Գորդինկոն եր դա,
Բերքի հերոս, քաջ պաշտպան։

Ո՜, պողպատի կամք ունի
Այդ պատանին ժրաջան—
Թշնամու դեմ պայքարող
Պարծանքն է վողջ Միությանն։

Դրված եր մի լուրջ խնդիր
Ուսման վորակի մասին,
Հերոսներս այդ գործում,
Պետք է լինենք առաջին։

Ինչպես յեղանք մենք հերոս
Փրկինք բերքը կորուստից,
Այնպես էլ ուսման համար
Լինենք վորակի մրցակից։

Յեթե ուսում չունենանք,
Տեխնիկան չհասկանանք,

Մենք չենք կարող ստեղծել,
Բայլշեվիվյան կոլխոզները։

Կոլխոզնիկն ունեվոր,
Պետք է ուսում ունենա,
Պետք է կարդալ սովորի,
Տեխնիկայից հասկանա,

Վոր գիտությամբ նա զինվի
Բնության գաղտնիքն իմանա,
Պայքարի իր ուժերով
Յեվ ընտիր բերք ստանա։

Դրա համար մեզ պետք է
Տիրապետել տեխնիկան —
Մենք կը հաղթենք բոլորին
Պոլիտեխնիկ կրթությամբ։

Պետք է լավ կազմակերպել
Այդ ճուղն ուսումնական,
Ծանրոթանալ հիմնական
Մասերին մեքենայի։

Կառուցվածքն իմանալ
Տրակտորի, կոմբայնի,—
Ահա թե ինչ հրատապ
Նոր խնդիր է պահանջվում։



Կառուցվածքն իմանալ
Տրակտորի, կոմբայնի։

Կարգապահ և ուշադիր,
Հարվածային՝ դպրոցում.
Պիոներներս այդ գործում,
Պետք է լինենք որինակ։

Առաջնորդենք բոլորին
Տանք ուսման բարձր վորակ —
— Պիոներներ, պատրաստ եք
Պայքարող ուսման գործում։

— Մի՛շտ պատրաստ ենք,
մի՛շտ պատրաստ,—
Հպարտ տվեցին խոստում.
Հենց վոր գարունը բացվի,
Յեվ մայը հողը տաքանա,
Վաղ գարնան հետ միասին
Հատիկը ծլի հասկ դառնա,
Նորից թմբուկ շեփորով
Կերթանք բերքին պաշտպանման։
Մենք պատանի հերոսներ,
Մենք միշտ կայտառ, ժրաջան։

■

ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ
ՀՍՍՌ ԳԱ գրադարան
ՀՀ Ազգային գրադարան
NL0408424

13129

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.
Цена 75 Коп.

10620

27 ԱՊՐ. 1934

На армянском языке

Октябрина Варосян

ЮНЫЕ КОВАЛЕРИСТЫ

891.995
Ч-33

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО

Գ.ՐԱՊՄ.ՀԵՏՍԳ.
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 32
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)